

Վերապատրաստող կազմակերպություն
ՀՀ ԿԳՄՍՆ ՝Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ
դպրոց”
ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐՊԱՏՐԱՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՍԱ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌԱՍՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյրության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Գագիկ Խաչատրյան

ԴՊՐՈՑ՝ Զոլաքարի Ալ.Վարդանյանի անվան 2 միջնակարգ դպրոց

Մարտունի-2022

Բովանդակություն

| | |
|------------------------------------|----|
| 1.Ներածություն..... | 3 |
| 2.Գրական ակնարկ..... | 5 |
| 3.Փորձարարական հետազոտություն..... | 11 |
| 3.1.Խմբի նկարագիրը..... | 11 |
| 3.2.Փորձարարական դաս-1..... | 12 |
| 3.3.Փորձարարական դաս-2..... | 14 |
| 4.Վերլուծություն..... | 16 |
| 5.Գրականության ցանկ..... | 17 |
| 6.Հավելված..... | 18 |
| Դասապլան-1..... | 18 |
| Դասապլան-2..... | 23 |

1. Ներածություն

Տեխնոլոգիա հանրակրթական առարկայի հիմնական նպատակն է սովորողներին նախապատրաստել ինքնուրույն աշխատանքային կյանքին. դաստիարակել կիրթատեղծագործող, նախաձեռնող և ակտիվ քաղաքացի: Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է, որը ուղած է մարդու գործնեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործնեության օպտիմալացման, արդյունքների զարգացման: Տեխնոլոգիան ըստ էության գործնական ուղղորդող և ուսուցանող ոլորտ է: Նաև ոլորտ է որտեղ ինտեգրվում են մյուս հանրակրթական առարկաներից ստացած գիտելիքները, գործնականում կիրառելով դրանք: Կենսապես անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորումը, աշխատանքային կուլտուրան, թիմով աշխատելու ունակությունը, ինքնաճանաշման և ինքնահաստատման լավագույն ուղին է, որը փորձի ավելացմամբ միմիայն լավագույն որակների երաշխիք է հանդիսանում: Այս ամենը հանրակրթության պետական չափորոշչչով սահմանված հիմնական ձևակերպումներն են տեխնոլոգիա առարկայի նպատակների և խնդիրների շուրջ:

Տեխնոլոգիան իր բնույթով անընհատ ստեղծագործելու, պրատելու և կատրելագործվելու հնարավորություն ստեղծող բնագավառ է: Սովորողները առնչվելով << տեխնոլոգիա >> առարկային, ակամայից իրենք էլ դառնում են այդ մեծ համակարգի մասնիկ՝ հեշտությամբ և սիրով ներգրավվելով գործընթացին:

Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

2.Գրական ակնարկ

Ներկայումս մեր երկրում էական փոփոխություններ են տեղի ունենում ազգային կրթական քաղաքականության մեջ: Դա պայմանավորված է Հիմնական և տարրական կրթության պետական չափորոշիչի ընդունմամբ և աշակերտակենտրոն մանկավարժության դիրքին անցնելով: Ժամանակակից դպրոցի խնդիրներից է մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ներուժը բացելը, որակյալ կրթության, ստեղծագործական կարողությունների դրսնորման հնարավորությունները: Ժամանակակից դպրոցը վերջին տարիներին ազգային կրթության համակարգում տեղի ունեցած հսկայական փոփոխությունների արդյունք է: Այս առումով կրթությունը ոչ միայն հասարակության սոցիալական կյանքի մի մասն է, այլ նրա ավանդաբարդը. դժվար թե նրա որևէ այլ ենթահամակարգ կարող է հաստատել իր առաջանցիկ զարգացման փաստը նորարարությունների և փորձերի նման առատությամբ: Հիմնական և առաջնային խնդիրը կրթական նյութի յուրացման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունն է՝ ուղղված կրթության ժամանակակից որակի բարձրացմանը: Եվ սա կրթության կողմնորոշումն է ոչ միայն աշակերտի կողմից որոշակի քանակությամբ գիտելիքների յուրացման, այլ նաև նրա անձի, նրա ճանաչողական և ստեղծագործական կարողությունների զարգացման վրա: Հանրակրթական դպրոցը պետք է ձևավորի համընդհանուր գիտելիքների, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև ուսանողների ինքնուրույն գործունեության և անձնական պատասխանատվության փորձի ամբողջական համակարգ, որը որոշում է կրթության բովանդակության ժամանակակից որակը:

Կրթության որակի բարելավումը պետք է իրականացվի ոչ թե ուսանողների վրա լրացուցիչ բեռի հաշվին, այլ ուսուցման ձևերի և մեթոդների կատարելագործման, կրթության բովանդակության ընտրության, կրթական տեխնոլոգիաների ներդրման

միջոցով, որոնք ուղղված են ոչ այնքան փոխանցմանը: պատրաստի գիտելիք, բայց ուսանողների անձնական որակների համալիրի ձևավորման վրա:

Հանրակրթական դպրոցի և ուսուցիչ առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են դրված: Անհրաժեշտ է փնտրել և գտնել ուղիներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ դարձնելուն: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ուսումնավարություն, որոնք կմոտիվացնեն աշակերտին, ուսուցանվող նյութը կդարձնեն հետաքրքիր, հասկանալի և մտապահվող: Ես դասվանդում եմ «Տեխնոլոգիա» առարկան և գտնում եմ, որ դասընթացը ճիշտ և ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ են ժամանակակից մոտեցումներ: «Տեխնոլոգիա» առարկայի դասաժամին կարող ենք կիրառել բազմաթիվ մեթոդներ, որոնք կնպաստեն և՝ աշակերտների ներգրավվածությանը և՝ նրանց մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Այդ մեթոդներից է՝ համագործակցային ուսուցումը:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Զոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս[6.175]: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քըերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն

ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, եթե աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»[2,18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ձանաշում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- ♣ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- ♣ բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ♣ ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Զոնսոնների, հիմնականում հինգն են.

- ♣ դրական փոխկախվածություն,
- ♣ դեմ առ դեմ փոխազդեցություն,
- ♣ անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- ♣ միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
- ♣ խմբային գործընթացի մշակում:

Հետազում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը՝ Պասի Սահմբերզը փոխներգործուն ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ» [1,17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նստաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու եռությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժենորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական սպայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի սպահանջներին»[3,145]:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարրեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարրերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջազայռություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեր, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Զոֆիկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է

այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնշին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՝ առանձին աշակերտների, և՝ խմբերին:

2. Խճանկար (Ջիգսա, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և Վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգս 2», որի փուլերն են.

- ♣ նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- ♣ աշխատանք փորձագիտական խմբում,
- ♣ աշխատանք ուսումնական խմբում,
- ♣ ավարտական աշխատանք,
- ♣ ամփոփում

3. Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել զաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան:

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշուադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ բոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Չոլաքար գյուղի Ալ.Վարդանյանի անվան համար 2 միջնակարգ դպրոցի 5-րդ դասարանում:

5-3. Փորձարարական հետազոտություն

3.1. Խմբի նկարագիրը

5-րդ դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին և աշակերտների թվի շատ լինելու, և՝ թույլ առաջադիմություն ունենալու պատճառով, ինչպես նաև չեն սիրում գործնական աշխատանքներ կատարել: Այս և նմատիա խնդիրները հաղթահարելու նպատակով որոշեցի անցկացնել փորձարարական դասեր՝ օգտագործելով համագործակցային ուսուցման աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը:/ Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնշին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՝ առանձին աշակերտների, և՝ խմբերին:/

5-րդ դասարանում սովորում են 19 աշակերտ, որից 13-ը տղաներ են /ես դասվանդում եմ տղաների խմբին/: Տարբեր ժամանակահատվածներում մասնակցել եմ վերապատրաստման դասընթացների, ժամանակ առ ժամանակ ծանոթանում եմ նոր մեթոդների, դասապրոցեսի կազմակերպման նոր ձևերի հետ և ես էլ որոշեցի իմ դասավանդման ընթացքում կատարել նմանատիա հետազոտական աշքատանք՝ մանավադ, որ 2-3 տղաներ չեն սիրում ինքնուրույն աշխատել:

Թեման ընտրել եմ « Փայտամշակման տեխնոլոգիա »-ից՝ « Փայտանյութի շաղափումը ձեռքի գործիքներով » և « Շինվածքների գեղերեսում; Գործնական աշխատանք » դասերը:

3.2. Փորձարարական դաս-1

Դասի թեման « Փայտամշակման տեխնոլոգիա »-ից՝ «Փայտանյութի շաղափումը ձեռքի գործիքներով » դասը: /տես՝ Դասավան-1/

Դասի սկզբնամասում կատարում եմ անդրադարձ նախորդ դասին՝ «Փայտանյութի մշակումը կտրմամբ »: Սովորողները ներկայացնում են իրենց տնային աշխատանքները, միասին ստուգեցինք, շտկեցինք սխալները:

Այնուհետև դասարանը բաժանում եմ խմբերի, «Մտքերի գրոհի » միջոցով վերհիշեցինք աշակերտների ունեցած գիտելիքները փայտամշակման տեխնոլոգիայի վերաբերյալ, տվյալ հետևյալ հարցերը.

- Փայտանյութի կտրման ի՞նչ ձևեր գիտեք:
- Ի՞նչ տարրերից է կազմված կտրիչի աշխատամասը:
- Ի՞նչպիսի՞ ձև ունեն սղոցների ատամները:
- Սղոցման ինչպիսի՞ եղանակներ գիտեք:
- Ի՞նչ է ոանդումը: Ի՞նչ կառուցվածք ունեն ոանդիչ գործիները:
- Ի՞նչ ոանդիչ գործիքներ գիտեք:
- Ինչպե՞ս է կատարվում ոանդման գործողությունը:
- Ինչպե՞ս են ստուգում ոանդված մակերեսույթի որակը:
- Ի՞նչ է շաղափը:
- Շաղափի ի՞նչ տեսակներ գիտեք:
- Շաղափման ի՞նչ եղանակներ գիտեք:
- Ի՞նչ գործիքներ ու հարմարանքներ են օգտագործում շաղափելիս:

- Ինչպե՞ս է կատարվում շաղափման գործողությունը:
- Աշխատանքի անվտանգության ի՞նչ կանոններ պետք է պահպանել շաղափելիս:

4-8րոպե/

Դասի ընթացքը՝ սովորողներին բաժանում եմ խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 3 աշակերտ, այնուհետև առաջարկում եմ աշխատել աշխատանքային տետրով՝ ըստ առաջադրանքների կատարել համապատասխան պահանջները: Յուրաքանչյուր խմբին տալիս եմ համապատասխան առաջադրանքները և իմ վերահսկողությամբ սկսում են աշխատել:Տալիս եմ հնարավորություն, որպեսզի երեխաները կատարեն առաջադրանքաները նորովի և դրսնորեն ստեղծագործական մոտեցում: Խմբերի միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները օգնում էին թույլ և դասին շմասնակցող աշակերտներն, ցույց էին տալիս աշխատանքի ճիշտ կատարման ձևերը և այլն:

Առաջադրանքների ավարտից հետո առաջարկել ամեն խմբից մեկական աշակերտ ներկայացնի իրենց կատարած աշխատանքները:/30-35 րոպե/

Դասի ավարտը՝կատարել անդրադարձ և ձևավորող գնահատում: Իսկ վերջում կատարում եմ հետադարձ կապ.սովորողների հետ վերլուծում ենք դասը,արդյո՞ք դասը հետաքրքիր էր, արդյո՞ք հասաւ այն վերջնարդյունքին որ նախատեսել էի դասի սկզբում և կատարում ձևավորող գնահատում՝ հատկապես այն աշակերտներն, որոնք չեն ցանկանում մասնակցել դասպրոցեսին:/3-5 րոպե/

3.3.Փորձարարական դաս-2

Ճնազույն մշակույթը ունեցող ժողովուրդների մեջ իր ուրույն տեղն է գրադեցնում հայ ժողովուրդն իր բազմաժանր արհեստներով ու արվեստով: Հայկական մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ է գրադեցնում փայտե իրերի պատրաստում և դրանց գեղերեսումը: Այս դասի թեման ընտրել եմ « Փայտամշակման տեխնոլոգիա » բաժնից՝ « Շինվածքների գեղերեսում: Գործնական աշխատանք »: /տես՝ Դասավլան-2/ « Շինվածքների գեղերեսում: Գործնական աշխատանք » դասի նպատակն է՝ - Ձևավորել զիտելիքներ գեղերեսման, դրանց հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ:

- Ձևավորել զիտելիքներ գեղերեսման եղանակաների մասին:

- Ըստայնել տարբեր գործիքների մասին զիտելիքները:

- Ձևավորել գործիքներով անվտանգ աշխատելու կարողություններ:

- Դաստիարակել կարգապահություն, ինքնավստահություն, համարձակություն, դժվարությունները հաղթահարելու, լսելու և կարողություններ:

Դասաժամը սկսեցի խթանման փուլով՝ ի՞նչ է իրենից ներկայացնում գեղերեսումը, ի՞նչով և ինչպես կարող ենք կատարել գեղերեսում: Աշակերտները պատասխանում են իրենց ունեցած տեղեկություններին համապատասխան: Այնուհետև օգտագործեցի ՏՏՏ գործիքներ. Նախօրոք ընտրել էի տեսանյութեր նվիրված փայտե իրերի գեղերեսման:

Տեսանյութը դիտելուց հետո անցնում եմ հիմնական մասին: Այս հատվածում դասարանը բաժանեցի խմբերի, յուրաքանչյուր խմբում 4-5 աշակերտ: Կիրառեցի Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Խմբերը ձևավորեցի այս մեթոդի համաձայն, խմբերի միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները օգնում էին թույլ և դասին շմասնակցող աշակերտներն, ցույց էին տալիս աշխատանքի ճիշտ

կատարման ձևերը և այլն: Ամեն մի խմբի աշխատանք վերահսկվում էր իմ կողմից: Իմաստի ընկալման փուլ; Այս մասում ամփոփվում է դասը, զնահատվում սովորողների գործունեությունը, և առաջադրվում են տնային հանձնարարություններ: Եզրափակիչ մասի տեսողությունը է 3-5 րոպե է: Դասն ամփոփելուց հետո հանձնարարում եմ տանը դիտել տեսանյութեր, կարդալ հոդվածներ, նյութեր նվիրված դասի թեմային, ինչպես նաև ուսումնասիրել ուրիշ ազգերի նմանատիպ աշխատանքները, որպեսզի հաջորդ դասի ընթացքում կատարենք ընդհանրացումներ, համեմատություններ, եզրակացություններ: Իսկ վերջում կատարում եմ հետադարձ կապ, սովորողների հետ վերլուծում ենք դասը, արդյո՞ք դասը հետաքրքիր էր, արդյո՞ք հասա այն վերջնարդյունքին որ նախատեսել էի դասի սկզբում և կատարում ձևավորող զնահատում:

4.Վերլուծություն

Աշակերտներին դասպրոցեսին ներգրավելու համար անցկացրեցի երկու փորձարարական դաս՝ 5-րդ դասրանում՝ տղաների խմբի հետ։ Դասպրոցեսի ընթացքում փորձեցի օգտագործել տարբեր մեթոդներ՝ ավանդականից մինչև ժամանակակից, որպեսզի կարողանամ ապահովել աշակերտների առավելագույն ներգրավվածությունն, դասի նկատմամբ հետաքրքրությունը և կարողանամ դաստիարակել կազմակերպվածություն, ինքնավստահություն, դժվարությունները հաղթահարելու հմտություններ տրվեց հնարավորություն, որպեսզի սովորողները լինեն նախաձեռնող, ինքնուրույն և ցույց տան իրենց ստեղծագործելու կարողությունները։ Այս երկու փորձարարական դասերի արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտները պետք է ունենան կայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու հնարավորություններ ընձեռվեն և այն պետք է լինի կանոնավոր և շարունակական։ Հետազոտության ընթացքում փորձ է արվել զնահատել սովորողների հետաքրքրությունները, սովորելու ձգտումները և անդրադարձ գործընթացի բոլոր կետերին։

Կարևորություն տվեցի նաև աշակերտների ստեղծագործական մտքին, նրանց արագ կողմնորոշվելու ընդունակություններին, նրանց մեջ բացահայտեցի յուրօրինակ կարողություններ, որոնք կարող եմ կիրառել հետազա դասերը կազմակերպելու ընթացքում։ Հետազոտության ընթացքում կիրաված մեթոդները օգտակար էին՝ նպատակին հասնելու տեսակետից, բայց կային և թերություններ, որոնք շտկելի են։

5.Գրականության ցանկ

1. Ա. Է. Ափոյան – Համագործակցայի ուսուցումը տարրական դասրաններում
2. ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Տեխնոլոգիա ուսումնական առարկայի ծրագիր
- 3.Համացանցից վերցված տեսանյութեր

6.Հավելված

Դասապլան-1

Առարկան՝ Տեխնոլոգիա, 5-րդ դաս.

Կազմող ուսուցիչ՝ Գագիկ Խարատրյան

| Առարկան՝ | Տեխնոլոգիա | Ամսաթիվ՝ | | Վիսամյակ՝ | 1-2ին | Դասարան՝ | 5-րդ |
|----------------------|---|----------|--|-----------|-------|----------|------|
| Խմբի բացվածքը՝ | 13 տղա | | | | | | |
| Թեմա՝ | «ԹԵՍԱ՝ Փայտամշակման տեխնոլոգիա »-ից՝ « Փայտանյութի շաղափումը ձեռքի գործիքներով» դասը: | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | ՏՀՏ գործիքներ, շաղափ, փայտանյութ, գունավոր մատիտներ, աշխատանքային տետրեր, դասգիրք | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Դասը սկսում էմ մտագրոհով՝ Սովորողները ներկայացնում են իրենց տնային աշխատանքները, միասին ստուգեցինք, շտկեցինք սխալները, պատասխանեցին հարցերին | | | | | | |
| Դասի նպատակը՝ | <ul style="list-style-type: none"> - ամփոփել տրված գիտելիքները • Տարրերակել շաղափիք, դրա տեսակները: • Ընդլայնել գիտելիքները շաղափման գործողության վերաբերյալ: • Ընդլայնել գիտելիքներ տարբեր գործիքների ու հարմարանքների մասին, որոնք օգտագործվում են շաղափելիս: | | | | | | |

| | |
|--|--|
| | <ul style="list-style-type: none"> Զնավորել գործիքներով անվտանգ աշխատելու կարողություններ: Դաստիարակել կարգապահություն, ինքնավստահություն, համարձակություն, դժվարությունները հաղթահարելու, լսելու և կարողություններ: |
|--|--|

Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

| | |
|--------------------|--|
| Վերջնարդյունքն եր՝ | <ul style="list-style-type: none"> Կարողանա տարբերակել շաղափը, դրա տեսակները: Ներկայացնի զիտելիքները շաղափման գործողության վերաբերյալ: Կիրառել տարբեր գործիքներ ու հարմարանքներ՝ որոնք օգտագործվում են շաղափելիս: Կարողանա ինքնուրույն կազմել և կատարել աստաղադրանքները: Ինքնուրույն մշակել և իրականացնել նախագծեր: Կիրառել շաղափով փայտամշակման պարզագույն կանոններ |
|--------------------|--|

| <u>Ուսուցչի գարգացման ընթացիկ քիրախները</u> | <u>Նպատակներին ուղղմավարություն</u> | <u>հասնելու աշխատանքի միջոցով աշակերտների աշխատանքի մեթոդներով՝ առավելագույն ներգրավվածության</u> |
|---|--|---|
| Համազործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության | Նախատեսում եմ տարբեր մեթոդներով՝ ավանդական և ինտերակտիվ, | |

| | | | |
|---|--|--|--|
| ապահովում: | | յուրաքանչյուր սովորողի դինամիկան | |
| գործողություններ /ժամ, տևողություն/ 1 դասաժամ | Ուսումնական գործունեություն Աշակերտներ | Պլանավորված տարրերակում և Ուգուազմավարություն | Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ /հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին/ |
| Մուտքներկարացակա Անդրադարձ հին դասին /4-8ր/ | Աշակերտները պատասխանում են հարցերին: | Դասը սկսում եմ մտագրոհով՝ տալիս եմ փայտամշակման գործիքներին վերաբերող տարրեր հարցեր: Այնուհետև անցնում եմ հիմնական մասին:Այս հատվածում | - Ի՞նչ է շաղափը: - Շաղափի ի՞նչ տեսակներ գիտեք: - Շաղափման ի՞նչ եղանակներ գիտեք: - Ի՞նչ գործիքներ ու հարմարանքներ են օգտագործում շաղափելիս: - Ինչպես է կատարվում շաղափման գործողությունը: |

| | | | |
|---|--|---|--|
| Հիմնական մաս/30-35ր/ Եզրափակիչ | Խմբերը Ճևավորեցի այս Մեթոդի համաձայն , խմբերի միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները օգնում էին թույլ և դասին շմասնակցող աշակերտներն , ցույց էին տալիս վարժությունների ճիշտ կատարման ձևերը և այլն: Սովորողները կատարում իրենց տրված առաջադրանքները, անհասկանալի հարցերը պարզաբանում ենք միասին: | դասարանը բաժանեցի խմբերի, յուրաքնչյուր խմբում 4-5 աշակերտ: Կիրառեցի Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:/ Ամեն մի խմբի աշխատանք վերահսկվում էր իմ կողմից՝ պահպանելով անվտանգության կանոնները: Դասը ավարտում եմ՝ խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները: Դասն ամփոփելուց հետո հանձնարարում եմ | - Աշխատանքի անվտանգության ի՞նչ կանոններ պետք է պահպանել շաղափելիս: |
|---|--|---|--|

մաս/3-5ր/

տանը կատարել
այս դասին
սովորածը՝
կատարելագործվել
ու նպատակով :
Իսկ վերջում
կատարում եմ
հետադարձ
կապ.սովորողների
հետ վերլուծում
ենք դասը,արդյո՞ք
դասը հետաքրքիր
էր, արդյո՞ք հասա
այն
վերջնարդյունքին
որ նախատեսել էի
դասի սկզբում և
կատարում
ձևավորող
գնահատում՝
հատկապես 4
աշակերտներն:

Տեսային աշխատանք /3ր/

Տնային առաջադրանքի հանձնում: Դասն ամփոփելուց հետո հանձնաբարում եմ տանը կատարել այս դասին սովորած քայլերը, դիտել տեսանյութեր շաղափով փայտի մշակման վերաբերող կատարելագործվելու նպատակով:

Դասապլան-2

Առարկան՝ Տեխնոլոգիա, 5-րդ դաս.

Կազմող ուսուցիչ՝ Գագիկ Խաչատրյան

| Առարկան՝ | Տեխնոլոգիա ա | Ամսաթի վ՝ | Կիսամյակ՝ | 1- 2ի ն | Դասարա ն՝ | 5- ր դ |
|-------------------------|---|--------------|-----------|---------------|--------------|--------------|
| Խմբի բացվածքը՝ | 13 տղա | | | | | |
| Թեմա՝ | « ԹԵՍԱ՝ Փայտամշակման տեխնոլոգիա »-ից՝ « Շինվածքների գեղերեսում: Գործնական աշխատանք»: | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | SZS գործիքներ, փայտանյութ, գունավոր մատիտներ, աշխատանքային տետրեր, դասզիրք, վրձին, լաթագունդ, լաք | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Դասը սկսում եմ մտագրոհով՝ Սովորողները ներկայացնում են իրենց տնային աշխատանքները, միասին ստուգեցինք, շտկեցինք սխալները, պատասխանեցին հարցերին | | | | | |

| | |
|---|--|
| <p>Դասի նպատակը՝</p> | <ul style="list-style-type: none"> -Զեսավորել զիտելիքներ գեղերեսման, դրանց հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ: -Զեսավորել զիտելիքներ գեղերեսման եղանակաների մասին: -Ընդլայնել տարբեր գործիքների մասին զիտելիքները: -Զեսավորել գործիքներով անվտանգ աշխատելու կարողություններ: - Դաստիարակել կարգապահություն, ինքնավստահություն, համարձակություն, դժվարությունները հաղթահարելու, լսելու և կարողություններ: |
| Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | |
| <p>Վերջնարույնքն եր՝</p> | <ul style="list-style-type: none"> -Ներկայացնել զիտելիքներ գեղերեսման, դրանց հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ: -Ներկայացնել զիտելիքներ գեղերեսման եղանակաների մասին: -Ներկայացնի զիտելիքները գեղերեսման տարբեր գործիքների մասին: -Կիրառի ստացած զիտելիքները գործնականում: Աշխատանքի ընթացքում անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների մասին: -Իմանա, որ զրաֆիկա բաժնում մաթեմատիկա, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն երկրաշափություն, ինֆորմատիկա առարկաների հետ գույություն ունեն միջառարկայական կապեր: |

| <u>Ուսուցիչ</u> | <u>գարզացման</u> | <u>ընթացիկ</u> | <u>Նպատակներին</u> | <u>հասնելու</u> |
|--|---|--|--|-----------------|
| <u>քիրախները</u> աշխատանքի առավելագույն ապահովում: | <u>Համագործակցային միջոցով աշակերտների ներգրավվածության</u> | | <u>Նպատակներին ուղարկարություն</u> Նախատեսում եմ տարբեր մեթոդներով՝ ավանդական և ինտերակտիվ, յուրաքանչյուր սովորողի դինամիկան | |
| <u>Գործողություններ /ժամ, տևողություն/ 1 դասաժամ</u> | <u>Ուսումնական գործունեություն Աշակերտներ</u> | <u>Պլանավորված տարբերակում և Ուգ ուղարկարություն</u> | <u>Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ /հանձնարարությա ն վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին/</u> | |
| <u>Մուտք, ներկա- բացակա Անդրադարձ հին դասին /4-8ր/</u> | <u>Աշակերտները պատասխանում հարցերին:</u> | <u>Դասը սկսում եմ մտագրոհով՝ տալիս եմ գեղերեսման վերաբերող տարբեր հարցեր: Այնուհետև անցնում</u> | <u>-Ի՞նչ է գեղերեսումը: - Գեղերեսման ի՞նչ եղանակներ գիտեք: - Ի՞նչ գործիքներով են կատարում գեղերեսումը: - Ինչպե՞ս է կատարվում</u> | |

| | | | |
|-------------------------|---|--|---|
| | | հիմնական մասին:Այս հատվածում դասարանը բաժանեցի խմբերի, յուրաքնչուր խմբում 4-5 | գեղերեսման գործողությունը: - Փայտամշակման տեխնոլոգիա բաժնում ո՞ր առարկաների հետ կան |
| Հիմնական մաս/30-35ր/ | Խմբերը ձևավորեցի այս մեթոդի համաձայն , խմբերի միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները օգնում էին թույլ և դասին շմասնակցող աշակերտներն, ցույց էին տալիս վարժությունների ճիշտ կատարման ձևերը և այլն: Սովորողները կատարում իրենց տրված առաջադրանքները, անհասկանալի | աշակերտ: Կիրառեցի Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:/ Ամեն մի խմբի աշխատանք վերահսկում էր իմ կողմից՝ պահպանելով անվտանգության կանոնները: Դասը ավարտում եմ՝խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները: | միջառարկայական կապեր: |

| | |
|--------------------------------------|---|
| Եզրափակիչ մաս/3-5թ/ | հարցերը պարզաբանում ենք միասին: Դասը ամփոփելուց հետո հանձնարարում եմ տանը կատարել այս դասին սովորածը՝ կատարելազործվել ու նպատակով : Իսկ վերջում կատարում եմ հետադարձ կապ.սովորողների հետ վերլուծում ենք դասը,արդյո՞ք դասը հետաքրքիր էր, արդյո՞ք հասա այն վերջնարդյունքին որ նախատեսել էի դասի սկզբում և կատարում ձևավորող գնահատում՝ հատկապես 4 աշակերտներն: |
|--------------------------------------|---|

| | | | |
|-----------------------|---|--|--|
| | | | |
| Տեսային աշխատանք /3ր/ | Տեսային առաջադրանքի հանձնում: Դասն ամփոփելուց հետո հանձնաբարում եմ տանը կատարել այս դասին սովորած քայլերը, դիտել տեսանյութեր՝ գեղերեսման վերաբերող՝ կատարելազործվելու նպատակով: | | |